ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2014-6-2-Ա

ք. Երևան 22.10.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի հոկտեմբերի 22-ի նիստում քննարկեց 2014 թվականի օգոստոսի 11-ին Յուրի Արսենի Պողոսյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված՝ «Ծանրության ուժի ազդեցությամբ հավելյալ մեխանիկական աշխատանք ստեղծելու եղանակ ըստ Պողոսյանի» անվանմամբ գյուտի (հայտ AM20130154) արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Գյուտի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

Տվյալ գյուտը չի բավարարում «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 14–րդ հոդվածով սահմանված արտոնագրաունակության արդյունաբերորեն կիրառելիության պայմանին:

Ելնելով հայտի նյութերից, ինչպես նաև գյուտի հավակնության սահմանման մեջ առկա հատկանիշների համախմբությունից փորձաքննությունը եկել է այն եզրահանգման, որ հնարավոր չէ իրականացնել հայտարկված եղանակը, քանի որ այն իրականացնող սարքն անաշխատունակ է: Ելնելով գյուտի նկարագրությունից փորձաքննությունը գտնում է, որ հայտի նյութերում նկարագրված միջոցներով հնարավոր չէ գյուտն իրականացնել հայտում նշված նշանակությամբ և իրականացնել գյուտի խնդիրը, այն է՝ ապահովել նյութական մարմիններից կազմված մեխանիկական բնույթի փակ համակարգում ծանրության ուժի ազդեցությամբ օգտակար աշխատանքային փուլի անընդհատությունը առանց արտաքին ազդեցության, և հավելյալ աշխատանք ստեղծելը:

Համաձայն «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգ»–ի 3–րդ գլխի 27–րդ կետի 1–ին ենթակետի, եղանակին վերաբերող գյուտի իրագործելիությունը հաստատող տեղեկությունները ներկայացնելիս գյուտի իրագործման օրինակներում պետք է նշվեն

նյութական օբյեկտի նկատմամբ գործողությունների հաջորդականությունը և անհրաժեշտության դեպքում՝ գործողությունների կատարման պայմանները, կոնկրետ ռեժիմները (ջերմաստիճան, ճնշում և այլն), օգտագործվող նյութական միջոցները (սարքերը, նյութերը, և այլն): Եթե եղանակը բնութագրվում է մինչև գյուտի առաջնության թվականը հայտնի միջոցների օգտագործմամբ, բավարար է այդ միջոցները բացահայտել այնպես, որ հնարավոր լինի իրագործել գյուտը: Սակայն եթե եղանակը բնութագրվում է անհայտ միջոցների օգտագործմամբ, ապա պետք է բերվեն դրանց բնութագրերը: Մասնավորապես, եղանակն իրականացնող նյութական միջոցներից «համակարգի վիճակի փոփոխման հանգույցը», որն ըստ հայտի նյութերի ապահովում է լծակի վրա գերբեռնավորումը և թերբեռնավորումը, բացահայտված չէ (օրինակ՝ դրա կառուցվածքը և այլն), առանց որի հնարավոր չէ պատրաստել հայտի նյութերում ներկայացված եղանակի հիման վրա աշխատող որևէ սարք:

Բացի այդ հայտնի է, որ համաձայն բնության հիմնարար օրենքի՝ էներգիայի պահպանման օրենքի, փակ ֆիզիկական համակարգն օժտված է էներգիայով, որը ժամանակի ընթացքում պահպանվում է, ինչպես նաև ցանկացած մեխանիկական համակարգ, անկախ կառուցվածքից, տարրերի ձևից, քանակից ու դասավորությունից, անկախ մարդու կամքից, միշտ գտնում է իր հավասարակշռության վիճակը: Այստեղից հետևում է, որ առանց արտաքին ազդեցության անհավասարակշռության հավերժական վիճակ հնարավոր չէ ապահովել: Եթե առաջարկված համակարգին հաղորդվի շարժում, այն կշարժվի այնքան ժամանակ մինչև իրեն հաղորդված էներգիան ծախսվի օդի դիմադրության, շփման և այլ առկա ուժերի հաղթահարման վրա: Բոլոր այլ եզրահանգումները կհակասեն մեխանիկայի օրենքներին (http://www.ru.wikipedia.org/wiki/Закон_ сохранения_энергии):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքներն այն մասին, որ կոլեգիան քննարկելով ներկայացված բողոքում բերված հիմնավորումները գտնում է, որ գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշումն իրավաչափ է և բողոքը պետք է մերժվի: Դա հիմնավորվում է նրանով, որ իսկապես, համակարգի վիճակի փոփոխման հանգույց կոչվածը բացահայտված չէ, որի աշխատանքով հայտատուն հիմնավորում է տվյալ եղանակի իրագործման հնարավորությունը: Սակայն, եթե դիտենք զուտ որպես լծակային համակարգ, ոչ մի նոր բան չկա, քանի որ ընդհանրապես հայտնի է, որ նժարային լծակի տեղաշարժը պայմանավորված է նժարներից որևէ մեկի վրա ավելի մեծ ուժ ազդելով:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես պնդեց, որ որոշումն իրավաչափ է:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Յուրի Արսենի Պողոսյանի կողմից ներկայացված՝ «Ծանրության ուժի ազդեցությամբ հավելյալ մեխանիկական աշխատանք ստեղծելու եղանակ ըստ Պողոսյանի» անվանմամբ (հայտ AM20130154) գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ